ՊԱՇՏՈՆ	Ֆինանսական մոնիթորինգի ծառայության ֆինանսական դիտարկումների և տվյալների վերլուծության խմբի մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	08/08/25թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Ֆինանսական մոնիթորինգի ծառայության ֆինանսական դիտարկումների և տվյալների վերլուծության խմբի մասնագետի ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդների կողմից իրականացվող գործարքների ուսումնասիրություն, վերլուծության իրականացում՝ ըստ գործարքի տեսակի,
- Հաճախորդների ռիսկի վերագնահատում,
- Բանկի վերլուծական համակարգում գեներացվող ազդակների օրական մոնիթորինգ,
- Բանկի վերլուծական համակարգում նոր սցենարների մշակում,
- Բանկի սպասարկման ցանցում գործող V-POS տերմինալների ընթացիկ մոնիթորինգ, գործարքների վերաբերյալ ուսումնասիրության իրականացում,
- Վիրտուալ արժույթների հետ կապված գործարքների ուսումնասիրություն, վերլուծության իրականացում,
- Բանկի հաճախորդ հանդիսացող ներդրումային ընկերությունների վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում,
- Գործարար հարաբերության դադարեցում, կասեցում,
- Կասկածելի գործարքների/գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրում

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ. MS Office-ի՝ գերազանց, SQL՝ միջինից բարձր, LSoft և Smart Vista՝ ծրագրերի իմացությունը ցանկալի է

- Լեզուների իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Վերլուծական հմտություններ
- Թիմային մտածողություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/166 : Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://idbank.am/